

ՀՈԳՇ. Տ. ԹԱԹՈՒԼ Ծ. ՎՐԴ. ԱՆՈՒՇԵԱՆ ՔԱՐՈՉԵՑ Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑՒՅ ՄԷՁ

Պոլսոյ Պատրիարքարանի միաբաններէն՝ Հոգշ. Տ. Թաթուլ Ծ. Վրդ. Անուշեան իր արձակուրդը անցնելու եւ հարազատները տեսնելու նպատակաւ Թորոնթօ այցելած էր: Հայր Սուրբը առիթէն օգտուելով 7 Դեկտեմբեր 2008 Կիրակի առաւօտ, ներկայ եղաւ ու նախագահեց Ս. Երրորդութիւն Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ մէջ կատարուած Ս. Պատարագին, իր հետ ունենալով Արժ. Տ. Սարգիս Ա. Քհնյ. Կիւլեանը: Պատարագիչն էր եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Չարեհ Ա. Քհնյ. Չարգարեան:

Յաւարտ Ս. Պատարագի Տէր Հայրը հիւր հոգեւորականին բարի գալուստ մաղթելով ծանօթացուց ներկաներուն: Հայր Թաթուլ իր պատգամէն առաջ շնորհակալութիւն յայտնեց Տէր Հօր, Իսթանպուլահայութեան ողջոյնները փոխանցեց հոգեւոր եղբայրներուն ու հաւատացեալ ժողովուրդին:

Հայր Սուրբը խօսեցաւ հաղորդական ոճով, տպաւորիչ քարոզ մը, բնաբան առնելով « Գիտցած եղիր որ քու հատուցումդ պիտի ունենաս արդարներու յարութեան ժամանակ »: Ապա խօսքերը շարունակելով ըսաւ, « Բերել մեր ծառայութիւնը այնպիսիներու թէ պետք ունին, Զրիստոս կը խօսի Աստուծոյ հրաւերին մասին, եկէք միասին խորհինք թէ ինչպէս պատասխան պիտի տանք Աստուծոյ հրաւերին, դրական պատասխան տալ այսինքն Ս. Պատարագին ներկայ ըլլալ եւ հաղորդուիլ Զրիստոսով: Ուրեմն հաւատքն է որ մեզ կը պատրաստէ ներկայ ըլլալու այդ խնջոյքին եւ համբերութիւնն է որ մեզ տրուած ժառանքին տէր պիտի դարձնէ:»

Այնուհետեւ տեղի ունեցաւ մասնաւոր Հոգեհանգստեան Պաշտօն 1988 ի Հայաստանի մէջ պատահած երկրաշարժի հազարաւոր զոհերուն, ինչպէս նաեւ կարգմը ազգայիններու հոգիներուն ի հանգիստ:

Տէր Չարեհ Ա. Քահանան շնորհակալութիւն յայտնեց Հայր Թաթուլին, ինչպէս նաեւ քաջառողջութիւն ու կատարեալ ապաքինում մաղթեց, Թուրքիոյ Հայոց Պատրիարք՝ Ամենապատիւ Տ. Մեսրոպ Ս. Արք. Մութաֆեանին: Ս. Պատարագը իր աւարտին հասաւ Հայր Սուրբի պահպանիչով:

Յարութիւն Դերձակեան